226 D.

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թիւ 375
Մարտ 18, 1991

Արժանաշնորհ
Տ. Արշէն Ա. Քհնյ. Այվազեան
Հովիւ Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ֆէրլոն.

Սիրելի Տէր Արշէն,

Ստացուած են համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 22, 1991 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 17, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի վեց անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Տոքթ. Քնարիկ Խաչատուրեան-Մայլր
Արաքսի Մումճեան
Մորճ Սարգիսեանց
Տորոթի Քարամեան
Ուիլեըմ Մգմահօն
Ման Տէմիրճեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնուի որ Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը Կանոնադրութեան յամաձայն չէ կատարուած, իսկ Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ներկայացուի Հովիւին, Ատենապետին եւ Ատենադպիրին անուններով։ Հաճեցէք առաջին առիթով Առաջնորդարան ղրկել Անդամական Ժողովի հրաւիրագիրէն եւ Օրակարգէն օրինակ մը։

Կը շնորհաւորեմ Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթեմ որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Աղօթակից

Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեան
Առաջնորդի Փոխանորդ